

Կ-039¹-17.08.2012,25.02.2013-ՊԱ-010/2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱՆԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐԲՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության 1985 թվականի դեկտեմբերի 6-ի օրենսգրքի (այսուհետ՝ օրենսգիրք) 32-րդ հոդվածը լրացնել նոր 5-րդ մասով հետևյալ բովանդակությամբ.

«Սույն օրենսգրքի 129.2-րդ հոդվածի 1-րդ մասով նախատեսված իրավախախտումների վերաբերյալ գործերով վարույթի առանձնահատկությունները սահմանվում են «Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով:»:

Հոդված 2. Օրենսգրքի 124-րդ հոդվածի 23-րդ մասի սանկցիայում «ութանապատիկի» բառը փոխարինել «քառասնապատիկի» բառով:

Հոդված 3. Օրենսգրքի 124.4-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Հոդված 124.4. Տրանսպորտային միջոցների վարորդների կողմից սահմանված արագությունը գերազանցելը

1. Երթևեկության սահմանված արագությունը 1-10 կմ/ժ-ով գերազանցելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ նվազագույն աշխատավարձի տասնապատիկի չափով:

2. Երթևեկության սահմանված արագությունը 11-30 կմ/ժ-ով գերազանցելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ նվազագույն աշխատավարձի երեսնապատիկի չափով:

3. Երթևեկության սահմանված արագությունը 31-50 կմ/ժ-ով գերազանցելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ նվազագույն աշխատավարձի հիսնապատիկի չափով:

4. Երթևեկության սահմանված արագությունը 51 կմ/ժ-ով և ավելի գերազանցելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ նվազագույն աշխատավարձի յոթանասունապատիկի չափով:

5. Սույն հոդվածի 1-ից 4-րդ մասերով նախատեսված իրավախախտումների վերաբերյալ գործերով վարչական տույժ նշանակելիս որոշում կայացնող մարմինը (պաշտոնատար անձը) արագաչափ սարքի արձանագրած ցուցանիշից պարտավոր է հանել 10 կմ/ժ՝ արագաչափ սարքի հնարավոր սխալանքի համար, իսկ եթե արագաչափ սարքի հնարավոր սխալանքը գերազանցում է 10 կմ/ժ-ը, ապա արագաչափ սարքի հնարավոր սխալանքի չափը:»:

Հոդված 4. Օրենսգրքի 129.1-րդ հոդվածը ձևաչել ուժը կորցրած:

Հոդված 5. Օրենսգրքի 129.2-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Հոդված 129². Հայաստանի Հանրապետության տարածքում հաշվառված տրանսպորտային միջոցների համար կնքված ավտոտրանսպորտային միջոցի օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության գործող պայմանագիր չունենալը, առանց տվյալ ավտոտրանսպորտային միջոցի օգտագործումից բխող պայմանագիր չունենալու, առանց գործող ԱՊՊԱ պայմանագիր ներկայացնելու տրանսպորտային միջոցը հաշվառելը կամ ԱՊՊԱ պայմանագիր չունեցող տրանսպորտային միջոցը վարելու միջոցով Հայաստանի Հանրապետության տարածք ներմուծումը թույլատրելը

Հայաստանի Հանրապետության տարածքում հաշվառված տրանսպորտային միջոցի սեփականատիրոջ (վարձակալի) կողմից սեփականության իրավունքով իրեն պատկանող (ֆինանսական վարձակալության (լիզինգի) պայմանագրով իրեն տրամադրված) յուրաքանչյուր տրանսպորտային միջոցի համար կնքված ավտոտրանսպորտային միջոցի օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության գործող պայմանագիր չունենալը, որը տևել է ավելի քան տասն օր՝

առաջացնում է տուգանքի նշանակում յուրաքանչյուր տասն օրվա համար՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հնգապատիկի չափով, սակայն յուրաքանչյուր տարվա համար՝ ոչ ավելի, քան սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի չափով:

Առանց տվյալ տրանսպորտային միջոցի համար կնքված ավտոտրանսպորտային միջոցի օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության գործող պայմանագիր ունենալու՝ Հայաստանի Հանրապետության տարածքում ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային ճանապարհներով տրանսպորտային միջոցը վարելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի չափով:

Առանց գործող ԱՊՊԱ պայմանագիր ներկայացնելու տրանսպորտային միջոցը հաշվառելը կամ ԱՊՊԱ պայմանագիր չունեցող տրանսպորտային միջոցը վարելու միջոցով Հայաստանի Հանրապետության տարածք ներմուծումը թույլատրելը, եթե ԱՊՊԱ պայմանագրի ներկայացումը (ԱՊՊԱ պայմանագիր ունենալը) տրանսպորտային միջոցի հաշվառման (տրանսպորտային միջոցը վարելու միջոցով Հայաստանի Հանրապետության տարածք ներմուծումը թույլատրելու)՝ օրենսդրությամբ նախատեսված պարտադիր պայման է՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ համապատասխան պաշտոնատար անձի նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկի չափով:»:

Հոդված 6. Օրենսգրքի 224-րդ հոդվածի՝

1) 1-ին մասից, 2-րդ մասի 2-րդ և 3-րդ կետերից հանել «129.1,» թիվը.

2) 2-րդ մասի 2-րդ կետում «Հայաստանի Հանրապետության ոստիկանության պետի հրամանով լիազորված պաշտոնատար անձինք» բառերը փոխարինել «ավագ տեսուչները, տեսուչները» բառերով:

Հոդված 7. Օրենսգրքի 302-րդ հոդվածի 1-ին մասից հանել «129¹,» թիվը:

Հոդված 8. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2014 թվականի հունվարի 1-ին, բացառությամբ սույն օրենքի 2-րդ և 3-րդ հոդվածների ու 6-րդ հոդվածի 2-րդ կետի, որոնք ուժի մեջ են մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի կողմից առաջին ընթերցմամբ ընդունված «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացում և փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծում կատարված փոփոխությունների վերաբերյալ

Հ/հ	Առաջարկության հեղինակը	Առաջարկության բովանդակությունը	
1.	ՀՀ կառավարություն	«Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացում և փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծը (այսուհետ՝ նախագիծ) լրացնել նոր հոդվածով (Հոդված 2), որով նախատեսվում է գործող օրենսգրքի 124-րդ հոդվածի 23-րդ մասի սանկցիայում «ութսունապատիկի» բառը փոխարինել «քառասնապատիկի» բառով: Այսինքն, տուգանքի չափը նվազեցվում է, ինչը պայմանավորված է նշանակվող տուգանքի չափը արարքի վտանգավորության աստիճանին և իրավախախտման վերացման, այն է՝ տրանսպորտային միջոցի տարհանման համար ծախսվող գումարին համապատասխանեցնելու անհրաժեշտությամբ:	ընդունվել է:
2.	ՀՀ կառավարություն	Նախագիծը լրացնել նոր հոդվածով (Հոդված 3), որով նախատեսվում է գործող օրենսգրքի 124.4-րդ հոդվածը շարադրել նոր խմբագրությամբ, որով սակայն ըստ էության բովանդակային իմաստով իրավախախտման դիսպոզիցիայի և սանկցիայի փոփոխություն չի կատարվում: Հոդվածի գործող խմբագրության 1-ին մասից հանվում է արագությունը մինչև 10 կմ/ժ-ով գերազանցելու համար պատասխանատվություն չնախատեսող դրույթը, համապատասխանաբար 10-ով նվազեցվում են հոդվածի 2-րդ, 3-րդ և 4-րդ մասերով նախատեսված՝ արագության գերազանցման չափերը, և հոդվածում ավելացվող 5-րդ մասով այդ նույն դրույթը՝ 10 կմ/ժ-ը կիրառելի դարձվում հոդվածի բոլոր մասերի նկատմամբ՝ օրենքով ամրագրելով արագաչափ սարքի հնարավոր սխալանքի չափի կիրառումը:	ընդունվել է:
3.	ՀՀ կառավարություն	Նախագիծը լրացնել նոր հոդվածներով (Հոդված 6 և Հոդված 7), որոնցով նախատեսվում է՝ 1) գործող օրենսգրքի 224-րդ հոդվածի 1-ին մասից, 2-րդ մասի 2-րդ և 3-րդ կետերից հանել «129.1,» թիվը, ինչպես նաև 302-րդ հոդվածի 1-ին մասից հանել «129 ¹ ,» թիվը, քանի որ նախագծի 2-րդ (ներկայիս 4-րդ) հոդվածով կատարվող փոփոխությամբ գործող օրենսգրքի 129.1-րդ հոդվածը ձանաչվում է ուժը կորցրած. 2) գործող օրենսգրքի 224-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետում «Հայաստանի Հանրապետության ոստիկանության պետի հրամանով լիազորված պաշտոնատար անձինք» բառերը փոխարինել «ավագ տեսուչները, տեսուչները» բառերով, քանի որ անհրաժեշտ է ձանապարհային ոստիկանության վարչական մասի (կենտրոնական ապարատի) բոլոր ծառայողներին ևս տալ վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերով որոշումներ կայացնելու իրավասություն:	ընդունվել է